աճած ցողունները փոխադրում էին մի ուրիշ, աւելի ազատ տեղ ու նորից տնկում:

Մի քիչ դէնը դեռ նոր են վարում հողը:

Ծանրամարմին եզը ջրի մէջ չըփչըփացնելով քաշում է թեթեւ արօրը. նրա ետեւից վազում է փոքրիկ երեխան՝ արօրին ուղղութիւն տալով:

Հողի մշակութիւնը Ճապոնում խիստ բարձր աստիճանի է հասած, թէեւ գործիքները չափազանց պարզ են եւ նախնական: Ճապոնը իրաւամբ կարելի է անուանել «մանր հողաբաժինների» երկիր: Պետութեան գլխաւոր եկամուտն էլ ստացւում է հողի արդիւնագործութիւնից:

Մեր ճամփան շարունակ բարձրանում էր վեր: Գնացող եկողների թիւն էլ շատանում էր: Մենք շարունակ պատահում էինք վազող ջիների ու նրանց կառքերի, կամ գիւղացիների, որոնք ուսին դրած երկար ձողերից կախած զամբիւղները, պտուղ ու բանջարեղէն էին տանում քաղաք:

Մեր ճամփին կից յաճախ մեր հանդէպն էր գալիս մի տօրի, սրբավայրերի այդ սովորական նախադուռը, եւ իսկապէս որոնող հայեացքը գտնում էր շուտով այս կամ այն փոքրիկ բլրակի գլխին միայնակ Բուդդհայի միայնակ արձան, մի ծածկի տակ իր բոլոր ստացած նւէրներով քաշւած:

Հասանք ջինրիկիշաների կայանը: Նրանք արդէն շատ էին յոգնել շարունակ սարը բարձրանալուց: Իսկոյն նետւեցին ստւերնոցի տակ ու սկսեցին իրենց պարզ նախաճաշը, որ պինդ եփած բրինձ էր:

Շնորհալի տանտիկինը մեզ էլ ուտելիք բերեց ու դրեց փոքրիկ սեղանների վրա:

Ամբողջ դադարը հազիւ մի-երկու վայրկեան տեւեց: